563

1. Տեր Հիսուսին ծառայող Գեդեոնի զինվորներ,
Չար աշխարհի մեջ գործող Սուրբ Խոսքի սերմնացաններ,
Օրն է թեքվել ավարտին, մայրամուտն է մոտենում,
Ցանենք սերմերը կյանքի, գիշերն է վրա հասնում:

2. Գեդեոնի զինվորին Տերն է տալիս զորություն,
Թեկուզ փոքր ջոկատով, մենք ունենք մեծ հաղթություն:
Աստված կօրհնի Իր գործը, մեզ հետ Տերն է ամեն օր,
Աստծո գործն է մնայուն, իսկ աշխարհը՝ անցավոր:

3. Եղբա՛յր ու քո՛յր, լավ խորհենք՝ ի՞նչ մեծ գործ է մեզ տրված,
Չհապաղենք, չծուլանանք, Տիրոջ մոտ բերենք մարդկանց:
Մեղքի խավար աշխարհում հոգիներն են կորսվում,
Աստծո Խոսքն է նոր կյանքի ու փրկության հույս բերում:

4. Մեկ անգամ է մեզ տրված կյանքը այս երկրի վրա,
Աստծո կամքը կատարենք, որ մտնենք փառքը Նրա,
Մնասները Իր տված շահով Իրեն դարձնենք,
Որ վերջում էլ մեզ ասի՝ ապրես դու, բարի ծառա:

Պատրաստված է Հոգևոր Արխիվի Կողմից | hogevorarchive.com | ergaran.com | 2025